

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՔՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0015, Սուրբ Գր. Լուսավորիչ 9

հեռ. (+374 11) 400 400, էլ. փոստ՝ [info@ucom.am](mailto:info@ucom.am)

[Ինտերնետային կայք՝ www.ucom.am](http://www.ucom.am)

Հաշվետվություն թիվ 3, 18.05.2020թ.

1. Սույնով տեղեկացնում ենք, որ 15.01.2020թ.-ից «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը վերակազմավորվել է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն): Վերակազմավորման արդյունքում «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մանակիցների բաժնեմասերը փոխարկվել են բաժնետոմսերի և տեղաբաշխվել են Ընկերության բաժնետերերի միջև:

2. Ընկերության բաժնետերերի՝ 25.11.2019թ.-ի հիմնադիր ժողովի որոշումով ձևավորվել է Ընկերության տնօրենների խորհուրդը՝ հետևյալ կազմով.

Արամ Սուրենի Խաչատրյան,  
Գուրգեն Գագիկի Խաչատրյան,  
Արտյոմ Գագիկի Խաչատրյան,  
Ահարոն Սահակի Լևոնյան,  
Ալեքսանդր Հովիկի Եսայան,  
Սարգիս Սամվելի Կարապետյան,  
Արա Սերգեյի Խաչատրյան:

3. Սույն թվականի ապրիլի 9-ին Ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը ներկայացրեց իր զբաղեցրած պաշտոնից ազատման դիմում, որին հաջորդիվ աշխատանքից ազատման դիմումներ ներկայացրեցին Ընկերության ղեկավար անձնակազմն ու մի շարք աշխատակիցներ: Ինչից հետո, սույն թվականի ապրիլի 14-ին Ընկերության տնօրենների խորհուրդը արտահերթ նիստ գումարեց, որի ժամանակ որոշում ընդունվեց Հայկ Եսայանին ազատել զբաղեցրած պաշտոնից և Ընկերության գլխավոր տնօրեն նշանակել Արա Խաչատրյանին: Նույն նիստի ժամանակ Ընկերության խորհրդի նախագահ ընտրվեց Գուրգեն Խաչատրյանը:

4. Նոր գլխավոր տնօրենի նշանակմանը հաջորդեց Ընկերությունը անհրաժեշտ մասնագետներով համալրելու գործընթացը և այս պահին բոլոր առանցքային պաշտոնները համալրված են արհեստավարժ աշխատակիցներով, ովքեր լիրարժեք վերահսկում և իրականացնում են Ընկերության բոլոր գործառույթները:

Սույնով հավաստիացնում ենք, որ Ընկերությունը շարունակում է իր բնականոն գործունեությունը և կատարում է իր պարտավորությունները բաժանորդների, բոլոր գործընկերների և շահառուների հանդեպ:

5. Ընկերության իրավանախորդ «Յուքոմ» ՍՊԸ-ի և «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի 100 % բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող «Վիմպել-Կոմունիկացիի» ՀԲԸ-ի միջև «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի 100 % բաժնետոմսերն Ընկերության կողմից ձեռք բերելու մտադրության մասին նախնական բանակցությունների արդյունքում 30.12.2019թ.-ին դիմում է ներկայացվել ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով՝ համակենտրոնացման թույլտվություն ստանալու համար:

«Վեոն Արմենիա» ՓԲԸ-ից ստացվել է ծանուցում՝ գործընթացներն ավարտելու վերաբերյալ: Անհրաժեշտ է դեռևս մի քանի քննարկում, հասկանալու համար արդյոք՝ ամբողջությամբ չեղարկվել է «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետոմսերն Ընկերության կողմից ձեռք բերելու գործընթացը թե՛ ոչ: Նշվածի մասին Ընկերությունը սահմանված կարգով կներկայացնի համապատասխան հաշվետվություն:

6. 11.05.2020թ.-ից լուծվել է Ընկերության և «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի միջև 16.08.2019թ.-ին կնքված՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում AMUCOMB21ER6 ԱՄՏԾ-ով պարտատոմսերի պարտադիր գնանշումներ կազմակերպելու մասին պայմանագիրը: